This project is funded by the European Union

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿ ԴԱՇԻՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առկա Իրավիճակ

ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հրապարակված տեղեկությունների հիման վրա 2018 թ.-ի վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության բուսաբուծության և անասնապահության ճյուղերին տրամադրված վարկերի բալանսային մնացորդը կազմել է մոտ 132,5 մլրդ դրամ: Այս գումարի ՀՀ դրամով տրամադրված մասը կազմել է ամբողջ պորտֆելի 50.4%, իսկ արտարժույթային մասը կազմել է վարկային պորտֆելի 49.6%: Եթե նկատի ունենանք միայն բուսաբուծությանը տրամադրված վարկերը , ապա ՀՀ դրամով այն կազմել է ամբողջ ծավալի միայն 43%:



Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը նույն 2018թ-ի 11 ամիսների համար կազմել է մոտ 800 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային պորտֆելում պատկերը հետևյալն է : Բուսաբուծությանը տրամադրված 21մլրդ վարկերից 15.4մլրդ կամ 73% կազմում են դրամային վարկերը: Անասնապահության պարագայում 24մլրդ դրամից 18.4մլրդ կամ մոտ 77 % նույնպես կազմում են դրամային վարկերը:

Ըստ տվյալների գյուղատնտեսության ոլորտի վարկերը կազմել են բանկերի վարկային պորտֆելի մոտ 4.5% իսկ վարկային կազմակերպությունների դեպքում մոտ 12%::

Գումարային վարկային միջոցները կազմում են մոտ 177.5 մլրդ դրամ: Հաշվի առնելով վերջին 8 տարիների վիճակագրությունը կարելի է պնդել, որ չնայած որոշ տարիների անկմանը, ընդհանուր առմամբ գրանցվում է բուսաբուծության և անասնապահության ոլորտում վարկային ներդրումների շարունակական որոշակի աճ: Օրինակ 2017-ի նույն ժամանակահատվածի համեմատ 2018-ի աճը կազմել է մոտ 20.2 մլրդ դրամ կամ 12.7%, չնայած չի հասել 2015 մակարդակին, հիմնականում այն պատճառով, որ 2014-ի վերջի ֆինանսական ցնցումների հետևանքով, 2015-ին բանկային համակարգը այդ պահին ազատ միջոցները ուղղեց

գյուղատնտեսության մեջ, քանի որ բարձր ռիսկայնություն և անորոշություններ կային մասնավորապես շինարարության որոշտում:



Կարելի է հաշվի առնել, որ արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են մրգերի և բանջարեղենի վերամշակումը, խմիչքի արտադրությունը և ծխախոտագործությունը, որպես արժեշղթայի օղակներ անուղղակիորեն նույնպես ազդում են գյուղատնտեսության ֆինանսավորման վրա, պետք է հաշվի առնել նաև այս ճյուղերին տրամադրված վարկերը, որոնց գումարային ծավալը կազմում է շուրջ 70 մլրդ դրամ: Այստեղ նույնպես գերակշռում են արտարժույթով տրամադրված վարկերը:

<u>Սուբսիդավորում</u>

Կառավարության որոշմամբ՝ 2011թ.–ի ապրիլի–ից գյուղատնտեսական նպատակներով արտոնյալ գյուղատնտեսական վարկեր էին հատկացվում հետևյալ պայմաններով՝ հայկական դրամով, մինչև 3 մլն դրամի չափով, մինչև 2 տարի մարման ժամկետով, տարեկան 14 տոկոս դրույքով, որից 4 տոկոսային կետ սուբսիդավորում էր պետությունը: Հանրապետության առավել կարիքավոր 225 համայնքների համար սուբսիդավորվում էր վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետը:

2018 թվականին ծրագրի տրամաբանությունը որոշակի խմբագրման ենթարկվեց, և վարկերի չափը սահմանվեց 3-ից մինչը 10մլն ՀՀ դրամ: Այժմ վարկերը հատկացվում են հայկական դրամով, մինչև 5 տարի ժամկետով և այս տարվա համար վարկի միջին չափը կգերազանցի 4 մլն դրամը, այն դեպքում որ նախորդ տարիներին այն կազմել է ոչ ավելքան 2 մլն դրամը, այսինքն գրանցվում է միջին վարկի խոշորացման միտում: ***Կոոպերատիվների համար սահմանվել է տոկոսային 1 հավելյալ կետի սուբսիդավորում:***

Ըստ սուբսիդավորման ծավալների վերաբերյալ նախատեսվում էր 2018 թ. հատկացնել 634.5 մլն դրամ՝ բայց վերջնական ծավալների վերաբերյալ, բացի երեք տարվա գումարային 1,9 մլրդ դրամի մասին ինֆորմացիայի բաց աղբյուրներում ավելի ճշգրիտ ինֆորմացիան բացակայում է, բայց կրկին կարելի է փաստել աճի միտումի մասին:

Առկա Խնդիրներ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսության վարկավորման մեջ կարելի է տարանջատել հետևյալ հիմնական խնդիրները:

1. Վարկատու կազմակերպությունների համար Գյուղատնտեսական վարկավորման բարձր ռիսկայնությունը, ուստի և ցածր գրավչությունը:
2. Հողի, որպես գյուղատնտեսական հիմնական ակտիվի և գյուղացու վարկային պարտավորությունների ապահովման միջոցի, չզարգացած շուկան:
3. Ֆերմերների գերվարկավորվածությունը այլ վարկերով
4. Ֆինանսական գրագիտության ցածր մակարդակը
5. Սուբսիդավորվող վարկերի խոշորացումը
6. Գյուղատնտեսությանը ուղված և գյուղատնտեսության հարակից ճյուղերում տրամադրված վարկավորման մեջ արտարժույթով տրամադրված վարկերի մեծ մասնաբաժինը
7. Կոոպերատիվների, որպես իրավաբանական անձանց վարկ ստանալու խոչնդոտները, մասնավորապես կոոպերատիվների բոլոր անդամների հաշվառումը որպես փոխկապակցված անձանց, և նրանցից որևէ մեկի բացասական վարկային պատմության առկայության դեպքում վարկավորման մերժում:

Ագրարային ոլորտի վարկավորման բարելավումը ապահովող

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գյուղատնտեսական վարկավորման բարելավմանը հասնելու համար գյուղատնտեսության պետական աջակցության, մասնավորապես գյուղատնտեսության վարկավորման սուբսիդավորման ծրագրերում հաշվի առնել հանրապետության տարբեր մարզերի գյուղատնտեսության առանձ-նահատկությունները և մասնավորապես բնակլիմայական գործոնների և կլիմայի փոփոխության երկարատև ազդեցությունը:
2. Հաշվի առնել ագրարային ոլորտում ներգրավված դերակատարների, մասնավորապես կոոպերատիվների՝ որպես գյուղատնտեսության խոշորացմանը միտված նախընտրելի մոդելի, բնորոշ առանձնահատկությունները, և վարկավորման և մասնավորապես վարկերի ապահովման նոր գործիքների կիրառման հնարավորությունը, և վարկավորման հետ կապված ռիսկերի ապահովման հնարավոր նոր եղանակներ և զսպման գործիքներ:

Գյուղատնտեսական վարկերի հասանելությունը և առկա միջոցների օգտագործման էֆֆեկտիվությունը բարձրացնելու առավել արդյունավետ միջոց է բանկային համակարգում **<u>գյուղատնտեսական վարկավորման տեսակակար կշռի ընդհանուր բարձրացումը,</u>** ինչին մեր կարծիքով մասնավորապես հնարավոր է հասնել վարկավորման բնագավառում հետևյալ քաղաքականության և միջոցառումների իրականացմամբ.

1) վարկատու կազմակերպությունների համար բարձրացնել սեփական միջոցներից ազգային արժույթով գյուղատնտեսական վարկավորման գրավչությունը՝ այդ նպատակով տվյալ կառույցներին տրամադրելով պետական երաշխիքներ, ապահովագրական այլ մեխանիզմներ, վարկերի չվերադարձնելու մեղմելու նպատակով, միևնույն ժամանակ պարտադրելով ներդնել այդ **միջոցների օգտագործման նպատակայնությունը խիստ վերահսկելու մեխանիզմներ**: Մասնավորապես պարտադրել վարկատու կազմակերպություններին գյուղատնտեսությունում **տնտեսավարողներին վարկավորել ֆինանսական իրատեսական և պահպանողական կանխատեսումների**, մասնավորապես առկա պայմանագրերի, և ոչ միայն գրավի կամ երաշխիքների առկայության հիման վրա:

2) վարկատու կազմակերպությունների համար **գյուղատնտեսական վարկավորման գրավչության բարձրացման նպատակով տվյալ կառույցներին տրամադրել ՀՀ դրամով էժան և երկարատև ֆինանսական միջոցներ**՝ միևնույն ժամանակ ապահովելով **այդ միջոցների օգտագործման նպատակայնության խիստ մոնիթորինգը և վերլուծությունը՝**

համակարգը արդիական պահելու և միջոցները գերակա ճյուղերին ուղղորդելու նպատակով:
3) ապահովել **բոլոր հետաքրքրված վարկատու կազմակերպությունների անխոչընդոտ մասնակցությունը գյուղատնտեսությանն ուղղված վարկավորմանն** առնչվող Պետական և Միջազգային **ծրագրերին**, ինչը կնպաստի առողջ մրցակցությանը և հնարավորություն կտա նվազագույնի հասցնել գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվող վերջնական վարկերի տոկոսները.
4) շարունակել գյուղատնտեսության ոլորտի վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերը՝ մասնավորապես ավելի **բարձրացնելով սահմանամերձ համայնքներին, կին և երիտասարդ ֆերմերներին, իրենց կողմից ձևավորված գյուղատնտեսական կոոպերատիվներին, տրամադրվող վարկերի սուբսիդավորման մակարդակը:**
5) Հաշվի առնելով նոր տեխնոլոգիաների ներդրման, ագրոտեխնիկայի զարգացման, այգեգործության և տոհմային անասնաբուծության զարգացման անհրաժեշտությունը և այդ բնագավառում մատչելի վարկավորման դերը՝ համապատասխանաբար կատարելագործել վարկավորման մեխանիզմները և պայմանները: Մասնավորապես, կոնկրետ ծրագրերի ծավալից և առանձնահատկություններից ելնելով, **սահմանել վարկավորման** համապատասխան, որոշ դեպքերում նաև **առավել մեծ մայր գումար, վարկավորման ժամանակ և կիրառվող արտոնյալ ժամկետից առավել երկար արտոնյալ ժամկետ** և վարկերի մարման ժամանակացույցը սահմանել եկամուտների գոյացման ժամկետներին համապատասխան:
6) խրախուսել վարկատու կազմակերպությունների կողմից գյուղական շրջաններում այլ վարկատեսակների (բիզնես, հիպոթեքային) տրամադրումը, որով հնարավոր կլինի խթանել համայնքներում տնտեսական ակտիվությունը և գյուղատնտեսությանը ուղղակիորեն չառնչվող ճյուղերի՝ որպես համայնքներում այլընտրանքային զբաղվածություն ապահովող միջոցի զարգացումը՝ մասնավորապես իրականացնելով պահուստների ձևավորման ավելի մեղմ քաղաքականություն, ինչը կնպաստի այդ համայնքներում ակտիվների լիկվիդայնության բարձրացմանը և թանկացմանը: **Պետք է խրախուսվեն նաև հողի շուկայի կայացմանը ուղղված վարկերը որոնք հնարավորություն կընձեռեն ֆերմերներին վարկ վերցնել հող գնելու նպատակով՝** այսպիսով խթանելով հողերի խոշորացումը, որը իր հերթին կհանգեցնի գյուղատնտեսական վարկավորման գրավով ապահովման բարելավմանը և ի հետևանք դրա՝ վարկավորման ծավալների ավելացմանը:

7) Իրագործել միջոցառումներ վարկային միջոցների գնագոյացման թափանցիկության ավելացման ուղղությամբ.
8)առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների համար գյուղատնտեսության ոլորտին տրամադրված վարկերի վերադարձելիության բարձր մակարդակն ապահովելու նպատակով՝ **իրականացնել միջոցառումներ՝ գյուղատնտեսությունում տնտեսավարողների ֆինանսական գրագիտությունը բարձրացնելու ուղղությամբ**, ինչը կհանգեցնի նրանց ֆինանսական գրագիտության և հետևաբար

կարգապահության բարձրացմանը և վարկերի հետ վերադարձի մակարդակի բարձրացմանը:
9) կարևորել ֆինանսական վարձակալության-լիզինգի դերը՝ որպես գյուղատնտեսությանը նոր գյուղատնտեսական տեխնիկայով և տեխնոլոգիաներով ապահովելու միջոց՝ միջոցներ տրամադրելով, ինչպես լիզինգ իրագործելու, այնպես էլ տրամադրված տեխնիկայի սպասարկումը ապահովելու նպատակով:

Սույն քաղաքականության համառոտագիրը մշակվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում Հայաստանի Գյուղատնտեսական Դաշինքի կողմից իրականացվող «Մասնակցային քաղաքականություն՝ կայուն գյուղատնտեսություն» ծրագրի շրջանակներումծրագրի շրջանակներում: Համառոտագրում տեղ գտած առաջարկություններըարտահայտում են Դաշինքի տեսակետը եւ կարող են չհամընկնել Եվրոպական միության դիրքորոշումների ու տեսակետների հետ:

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

Համառոտագրի հետ կապված հարցեր ունենալու դեպքում կարող եք կապվել՝

«Մասնակցային քաղաքականություն՝ կայուն գյուղատնտեսություն» ծրագրի համակարգող՝

Վաղիմ Ուզունյան

+374 91 221158
+374 93 718138
vuzunyan@oxygen.org.am